

---

---

Գրիգոր Նարեկացի. մատենագիտություն (Աշխատասիրությամբ՝ Աստղիկ Ղափլանյանի), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2015, 624 էջ + 12 էջ նկար:

Գրիգոր Նարեկացին բոլոր ազգերի ու ժամանակների լուսապսակ դեմքերից է, մեր ազգի գոյությունն արդարացնող երևույթներից մեկը: Նա և իր թողած անմահ գործերն ի սկզբանե սրբացվել են իրեն ծնող ժողովրդի կողմից, արժանացել նաև օտարների հետաքրքրությանն ու հիացմունքին: Նարեկացու երկերը, ամբողջական թե հատվածաբար, հայոց մեջ ամենաշատ լույս ընծայվածներից են: Նրա ստեղծագործական ժառանգությունը, հատկապես, «Մատենանոցերգութեան» պոեմը կամ «Նարեկ»-ը, որ հայ միջնադարյան գրչաշխարհում ամենատարածվածն էր «Սաղմոսարան»-ից ու «Նոր Կտակարան»-ից հետո և ստացել էր «Հայոց ավետարան» անվանումը, այնքան խորն ու բազմաբովանդակ է, որ առնչվում է մի շարք այլ բնագավառների. դրանով է բացատրվում ամենատարբեր ոլորտների հայ և այլազգի շատ մասնագետների ու հետազոտողների չմարող հետաքրքրությունը մեր անգուգական աստվածային հանճարի գրական վաստակի, հատկապես «Նարեկ»-ի նկատմամբ. Նարեկացու և իր երկերի վերաբերյալ ստեղծվել է լեռնակուտակ գրականություն: Բնականաբար, վաղուց էր առաջացրել Նարեկացու երկերի, նաև դրանց վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մատենագիտությունը կազմելու անհրաժեշտությունը. այդ առաքելությունը ստանձնել և մեծ բարեխղճությամբ ու բարձր մակարդակով իրականացրել է գրադարանային գործի նվիրյալ, Արարատյան հայրապետական թեմի գրադարանավարուհի Աստղիկ Ղափլանյանը:

Մատենագիտությունն ընդգրկում է Երևանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի 1173 թ. ընդօրինակված թիվ 1568 ձեռագրից մինչև 2014 թ. տպագիր հրատարակությունները: Սա առաջին մատենագիտությունն է, որտեղ նշված են նաև ձեռագրեր: Ձեռագրացուցակների, տեղեկատու հրապարակումների օգնությամբ տրված է հաշվառված ձեռագիր և տպագիր միավորների բովանդակ հարստությունը:

Համաձայն ձեռագրացուցակների՝ ներկայացված են Նարեկացու ստեղծագործությունները, նրա կենսագրության հետ կապված յուրաքանչյուր տեղեկություն: Մասնավոր բժախնդրությամբ ներկայացված են «Մատենանոցերգութեան» երկի բոլոր ձեռագրերն ու տպագիրները. Ա. Ղափլանյանը

ձեռագրացուցակներից հանել է “Նարեկ”-ների ամբողջական 204 միավոր, որից 7-ը՝ տաճկերեն, 1-ը՝ արաբերեն: Մատենագիտության մեջ տեղ գտած հատվածական “Նարեկ”-ները կազմում են 110 միավոր: Արձանագրված են նաև “Գանձեր”-ը՝ 68 միավոր, “Տաղեր”-ը և “Փոխեր”-ը՝ 516 միավոր: “Երգ երգոց”-ի մեկնության քննական բնագրի ներածության մեջ (Մատենագիրք հայոց, հ. ԺԲ, Ժ դար: Գրիգոր Նարեկացի.–Երևան, 2001, էջ 757–759) հիշատակված է այդ երկի 72 միավոր, սույն մատենագիտությունը կազմողի կատարած աշխատանքի արդյունքում հայտնի է դարձել “Երգ երգոց”-ի մեկնության 94 միավոր: “Նշխարներ Ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից” բաժնում վեր է հանված 575 ստացվածքներով ձեռագիր միավոր: Նշված է հայ միջնադարյան իրականության մեջ շատ տարածված ձեռագիր հմայիլների (որոնցում մշտապես տեղ են գրավել “Նարեկ”-ի ԺԲ և ԽԱ գլուխները) 43 միավոր: Նշված են նաև “Մատեան”-ից հատվածներ պարունակող տպագիր հմայիլները:

Մատենագիտության մեջ արձանագրված են “Մատեան”-ի բազմաբարդ աստվածաբանության բացատրությանն ուղղված ինչպես միջնադարյան լուծմունքները, այնպես էլ Հակոբ Նայան պատրիարքի (1745 թ.) և հայր Գաբրիել Ավետիքյանի (1801, 1827 և 1859 թթ.) մեկնությունները: Հաշվի առնելով նյութի կարևորությունը՝ աշխատության մեջ նշված են այն հետազոտությունները, որոնցում խոսվում է “Նարեկ”-ի հայ գեղարվեստական գրականության, բանահյուսության և արվեստի վրա ունեցած ազդեցությունների մասին: Ընդգրկված են նաև Նարեկացու ժառանգության այլալեզու թարգմանությունները: Բերված է նրա վաստակին նվիրված ուսումնասիրությունների մատենագիտությունը:

Ս. Ղափլանյանը, մատենագիտության լեզվով ասած, մատենագիտության մեջ ստեղծել է մատենագիտություն, այն է՝ մատենագիտական միավորները բաժանել է ըստ բնագավառների կամ ըստ թեմաների. Նարեկացին՝ փիլիսոփա (հոգեբան), մարդասեր, Նարեկացին և ադանդավորությունը, Նարեկացու միստիցիզմը (ծածկագրություն, թվերի և տառերի խորհրդաբանություն), դավանությունը, լեզուն և ոճը, ““Նարեկ”-ը՝ բժշկարան”, ավանդապատումներ, հրաշքներ և այլն, ինչն ավելի դյուրին է դարձնում հետազոտողների գործը: Գրքում տեղ են գտել նաև “Ս. Գրիգոր Նարեկացին և համաշխարհային գրականությունը”, “Նշանավոր մարդիկ Ս. Գրիգոր Նարեկացու մասին” բաժինները, վերջում բերված են տեղեկատվական նյութեր:

Աշխատությունն ունի անվանացանկ, որտեղ հիշատակված են Նարեկացուն ու նրա արվեստին առնչված բոլոր անձանց ազգանունները՝ գրախոսողներ, խմբագիրներ, նկարիչներ և այլն:

Մատենագիտության մեջ զետեղված են լուսանկարներ, որոնցում ներկայացված են Ս. Գրիգոր Նարեկացու ճգնարանը, ճգնարանի հատակագիծը, Գրիգոր Մլիճեցու՝ Նարեկացու պատկերը բովանդակող երկու մանրանկար:

Այս աշխատանքի առանձնահատուկ կողմերից մեկը նրա ընդգրկունությունն է. այն ներառում է Նարեկացու անձին ու գործին առնչվող յուրաքանչյուր գրվածք՝ տպագիր, թե՛ ձեռագիր, որ հասանելի է եղել կազմողին: Ու քանի որ նշված աշխատության մեջ արտացոլված է Նարեկացու ստեղծագործական ամբողջ ժառանգությունը, ուստի այնտեղ իրենց հետաքրքրող տեղեկությունները կարող են գտնել ոչ միայն նարեկացիագետները, այլ նաև առհասարակ հայագետները, գրականագետները, աստվածաբանները, փիլիսոփաները, արվեստագետները, մշակութաբանները, մանկավարժները, հոգեբույժները և, պարզապես, ընթերցող լայն շրջանակները. մեծ է աշխատության ճանաչողական արժեքը:

Սույն գիրքը կազմելու համար աղբյուր են ծառայել Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրացուցակները, հմայիլները և գրքային ֆոնդերը, Հայաստանի ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի ֆոնդերը, Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի, Երևանի պետական համալսարանի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, ՀՀ գրողների միության, Գրապալատի գրքային ֆոնդերում եղած՝ Նարեկացու ստեղծագործությունների ու նրա անվան հետ կապված տարաբնույթ տեղեկությունները:

Ձեռագրերի ճիշտ նկարագրության համար Ա. Ղափլանյանը շնորհակալություն է հայտնում Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հակոբ Քյոսեյանին, ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ձեռագրագետ Լուսինե Թումանյանին, Հայաստանի ազգային գրադարանի աշխատակցուհի, կենսաբանական գիտությունների թեկնածու Նոնա Ստեփանյանին, շնորհակալություն է հայտնում նաև գրադարանների ու Մատենադարանի բանիմաց և բարյացակամ վերաբերմունք ցուցաբերած աշխատակիցներին:

Սույն գիրքը հրատարակվել է Արարատյան հայրապետական թեմի Առաջնորդական Փոխանորդ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանի հոգածությամբ և երևանաբանակ բարերար Կարո Շահբազյանի մեկենասությամբ, որոնց կազմողը ևս հայտնում է իր խորին շնորհակալությունը:

Այս մեծարժեք աշխատանքը պատրաստ էր տպագրության, երբ 2015 թ. մայիսի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ Նորին Սրբություն Հռոմի Ֆրանցիսկոս Պապի կողմից մատուցված Աբ. Պատարագից հետո Սուրբ Գրիգոր Նարեկացին հռչակվեց Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետ (հիշյալ իրադարձության հետ կապված նյութերը զետեղված են “Յավելուած” բաժնում): Ա. Ղափլանյանը Մատենագիտությունը նվիրել է Պապի կողմից Ս. Գրիգոր Նարեկացուն Տիեզերական եկեղեցու Վարդապետ հռչակելուն և Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին:

Խնդրո առարկա մատենագիտությունը մեզանում Նարեկացու թողած անգին ու անմահ վաստակը հայագիտական ուսումնասիրությունների հիման վրա հաշվառելու և որոշակի համակարգով ներկայացնելու առաջին փորձն է: Ավելի քան մեկ տասնամյակ Ա. Ղափլանյանն անձանձիր աշխատել է Հայաստանի տարբեր գրամշակութային օջախներում՝ որոնել, դասակարգել, ամբողջացրել: Այդ աշխատանքի շարժառիթն այն անվերապահ ու ակնածոտ սերն է, որ կազմողը տածում է Նարեկացու անվան և ժառանգության նկատմամբ: “Տասդարյա պատմություն... և երկար տարիների աշխատանք, որը փորձում է ի մի բերել նարեկացիագիտության անցած ուղին: Ս. Գրիգոր Նարեկացու գրական ժառանգությանը ծանոթանալու համար հարկավոր էր ոչ միայն նյութերի ուսումնասիրություն, այլև երկարատև կենտրոնացում, սեր մեծ մտածողի և աստվածաբանի նկատմամբ, ի վերջո՝ անսահման հավատ առ Աստված”, – գրում է գրքի խմբագիր Հակոբ Քյոսեյանը: Իրոք, այս աշխատությունը յուրովի ներկայացնում է նարեկացիագիտության անցած ողջ ուղին:

Նշենք, որ կազմողը սոսկ չի զետեղել մատենագիտական միավորների վերնագրերը ժողովածուի մեջ, նա ձեռքն է առել դրանցից յուրաքանչյուրը, թերթել, զգացել դրանց լույսն ու ջերմությունը: Իր կատարած աշխատանքն Ա. Ղափլանյանը բնորոշում է Հակոբ Նայյան պատրիարքի հետևյալ խոսուն արտահայտությամբ. “Ադամանդէ պալատին խեցիէ դուռ շինեցի” (էջ 12):